ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015թ. սեպտեմբերի 7 թիվ 99-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1/32.2/12506-15 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինների կանոնադրությունները հաստատելու մասին» N 14-Ա որոշման N 2 հավելվածով հաստատված կանոնադրության «Բաժնի գործառույթները» գլուխը լրացնել նոր ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

1) «իե) ցուցաբերում է աջակցություն համայնքների ղեկավարներին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում»:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ